

Նասարակական գիտությունները ինչով են կարող նպաստել
հասարակության վերափոխմանը

ASCN

PROGRAMME

ACADEMIC SWISS CAUCASUS NET

Կովկասի Ակադեմիական Շվեյցարական Ցանց (ԿԱՇՑ) հրատարակություն

ԿԱՇՑ ծրագիրը հանդիսանում է «Գերերտ Ռուֆ Շտիֆտունգ» հիմնադրամի նախաձեռնությունը Ֆրիբուրգի համալսարանի հետ համագործակցությամբ

Նասարակական գիտությունների «ղժվարին ժամանակներում» դերի մասին էջ 3

Մենք պարզապես չգիտենք. Բաղաբականության մշակման գործում հասարակագիտության օգուտը էջ 4

Ժողովրդավարության սկզբունքների ամրապնդում էջ 8

Նասարակական գիտությունները և առողջ բանականության մշակույթը էջ 10

Նասարակական գիտությունները հասարակության հայելին են էջ 12

ԿԱՇՑ ծրագիր. Սոցիալական կապիտալի դերը Վրաստանում գյուղական համայնքների զարգացման գործում էջ 14

Նայաստանը միջազգային գիտական համայնքի անդամ էջ 16

Նասարակական գիտությունները հասարակության շնչառությունն են էջ 19



Ինչո՞ւ հասարակական գիտությունները

Նասարակությանն օգուտ բերելու իմաստով հասարակական գիտություններն ավանդաբար համարվել են բնական գիտություններից, ճարտարագիտությունից և բժշկագիտությունից ետ մնացող: Նասարակական գիտությունների բնագավառում իրականացված ծրագրերի ազդեցությունը և դրանց շրջանակներում հայտնաբերված փաստերը հնարավոր չէ հեշտությամբ չափել հրատարակված աշխատանքների և նյութերի, պատենտների կամ հետազոտություններից ստացված լրացուցիչ արդյունքների միջոցով: Այդ պատճառով էլ հասարակության համար «ուղղակի օգուտը» մեծ մասամբ հնարավոր չէ ցույց տալ:

Նասարակական գիտությունների բնագավառում հետազոտությունների արդյունքը գնահատելու այդ բնորոշ դժվարությունից անմիջապես հարց է ծագում, թե ինչ օգուտ կամ ավելի ճիշտ ինչ հասարակական կարևորություն ունեն հասարակական գիտությունները և ինչպես է կարելի դա գնահատել: Կամ հարցի էլ ավելի պրովոկացիոն ձևակերպմամբ՝ ինչո՞ւ հասարակությունը պետք է ֆինանսավորի հասարակական գիտությունների բնագավառում հետազոտական ծրագրեր, եթե հնարավոր չէ ցուցադրել ուղղակի, անմիջական օգուտ:

Պատասխանը բարդ է և բազմերես՝ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում ուսումնասիրությունները հատկապես կարևոր են անցման գործընթացի համար: Դրանք կարող են նպաստել երկրի զարգացման համար էական նշանակություն ունեցող հատվածներում բարեփոխումների կարիքի հայտնաբերմանը: Դրանք կարող են նաև օգնել հաղթահարել դժվարությունները և գտնել հնարավոր լուծումներ երկրի քաղաքական կայունության և սոցիալ-տնտեսական զարգացման համար այնպիսի էական ոլորտներում, ինչպիսիք են ազգամիջյան հարաբերությունները, փոքրամասնությունների պաշտպանությունը, ազգի կերտումը, ճիշտ կառավարումը և պետության շինարարությունը: Այս ամենի մասին ավելի մանրամասն խոսվում է այս գրքույկում:

Ֆիլիպ Էզեր

«Գեներտ Ռուֆ Շտիֆտունգ» հիմնադրամի տնօրեն
Ցյուրիխ, Բազել, Շվեյցարիա

Հասարակական գիտությունների «դժվարին ժամանակներում» դերի մասին

«Երբ իրականությունը անախորժ է, պատրանքները հանդիսանում են փախուստի գրավիչ ճանապարհ: Դժվարին ժամանակներում անպատկառ շահարկողները ձեռք են բերում մրցակցային առավելություն նրանց նկատմամբ, ովքեր փորձում են առձակատման գնալ իրականության հետ»:

ՋՈՐՋ ՍՈՐՈՍ

Կասկած չկա, որ անցման փուլում գտնվող երկրներում և դրանցից դուրս կա գիտելիք ձեռք բերելու կարիք, որպեսզի ավելի լավ պատկերացնենք, թե ինչ խնդիրներ ունեն այդ երկրները և ինչ ուղի է բռնել այն փոփոխությունը, որին նրանք ենթարկվում են:

Այնպիսի կիսավտորիտար երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Բելառուսը և Ադրբեջանը, քաղաքական վարչակարգը ձգտում է կառավարել հասարակության համար կարևոր գիտելիքի ստեղծումը, օրինակ՝ քաղաքականացնելով հետազոտությունները և դրանք օգտագործելով որպես հասարակական նպատակներին հասնելու գործիք: Ուստի հասարակական գիտությունները կարող էին իրենց դերի մի մասը համարել ազատ և ժողովրդավարական հասարակության պայմաններին անդադառնալը, քանի որ դա ինքնին նախապայման է այդ նույն հետազոտությունների ազատության պահպանման և անկախ գիտական մտքի գոյության համար: Սա թերևս ավելի ներհատուկ է գիտնականներին ոչ կայուն անցումային հասարակություններում, քան կայուն, ժողովրդավարացված երկրներում:

Նենց անցումային երկրներում է, որ հասարակագետները մի ամբողջ շարք տարաբնույթ պատճառներով պետք է որոշակի տարածություն պահպանեն իրենց և շրջապատի միջև և ջանք թափեն իրենց անկախությունը պաշտպանելու համար: Նրանք պետք է մտնեն նաև, որ քաղաքագիտության կամ սոցիոլոգիայի «արժեքը» կամ «օգուտը», օրինակ, կայանում է նրանում, որ այդ բնագավառները չեն ծառայում քաղաքականության կամ տնտեսական համակարգերի շահերին, այլ ընդհակառակը, վերլուծում են հասարակական խնդիրները և արդի հարցերը իրենց ուրույն տեսանկյունից՝ հիմնվելով իրենց ուրույն մեթոդների վրա:

Հասարակական գիտությունների տեսանկյունից հասարակության համար կարևորություն ունեցող հարցերով զբաղվելը նշանակում է, որ նրանք նախևառաջ պետք է զբաղվեն իրենք իրենցով: Այն վերլուծական գործառնությունը, որը նրանք իրականացնում են հասարակության մեջ սոցիալական շահեկից կողմերը, իշխանության համակարգերը, անհավասարության դրսևորումները և այլ երևույթները ուսումնասիրելիս, ենթադրում է նաև հետազոտական բնագավառներում տարբերակման և խնդրի ձևակերպումների քննադատական վերլուծություն: Ուստի «իրականության հետ առձակատման գնալը» վերաբերում է ոչ միայն պաշտոնական առասպելներին և դիսկուրսներին, այլ նաև այն փաստին, որ հասարակական գիտությունների հայեցակարգը նույնպես կարող է վիճարկվել:

Մյուս կողմից, հասարակական գիտությունների նպատակը ներհայեցողական ինքնադիտումը չէ, ոչ էլ այն սահմանափակվում է հասարակության քննադատական վերլուծությամբ: Նրանք նաև

փորձում են ուշադրություն հրավիրել հենց հասարակության ներսում խնդրահարույց բնագավառների և գործողության այլընտրանքային ուղիների վրա, ինչը քաղաքականության դեպքում, օրինակ, ուժեղացնում է որոշակի քաղաքական բարեփոխումների անհրաժեշտության ընդունումը: Հիշտ այս գործառնության միջոցով հասարակական գիտությունները կարող են նաև սնուցել այն հույսը կամ պատրանքը, որ իրենց դատողությունները և հայտնաբերած փաստերն ազդեցություն են թողնում հասարակության, հասարակական կարծիքի և քաղաքականության մշակման վրա: Նետազոտությունների արդյունքները կարող են նպաստել խտրականության և անիրավահավասարության նոր ձևեր բացահայտելուն և քաղաքական որոշումներ կայացնողներին այդ հարցերով զբաղվելու կարիքի մասին նախազգուշացնելուն:

Անցումային երկրներում քաղաքական, տնտեսական և սոցիալական տեղաշարժերի դինամիկան և ուղղությունն ուսումնասիրող հետազոտական ծրագրերն աջակցում են այդպիսի գործընթացների ընկալմանը: Եվ հենց այն պատճառով, որ, լավագույն տարբերակում, նրանք ազդում են հասարակության տեղեկացման, արդի խնդիրների ընկալման, բացահայտման և լուծման վրա, այս ծրագրերը ունեն հասարակությունը փոխելու գործընթաց: Ցանկացած կազմակերպություն, որը չի ձգտում ավելի պարզորոշ պատկերացնել, թե ինչպես է գործում իր հասարակությունը, ինչպես դա սովորաբար պատահում է ավտորիտար կամ հիբրիդային վարչակարգերում, նաև քիչ է հետաքրքրվում հասարակական գիտությունների առողջ, քննադատող համակարգի գոյությամբ: Եվ հակառակը, նրանք, ովքեր կողմ են հասարակական գիտությունների զարգացումը խրախուսելուն և խթանելուն ուղղված ԿԱՇՅ ծրագրի նպատակին, նաև անուղղակիորեն խթանում են իրենց իսկ կարևորությունը և իրենց նկատմամբ արձագանքը հասարակության մեջ:

Նիկոլաս Հայոզ, Ֆրիբուրգի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր, ԿԱՇՅ ծրագրի տնօրեն
Դենիս Դաֆֆուն, ԿԱՇՅ ծրագրի համակարգող



Մենք պարզապես չգիտենք. քաղաքականության մշակման գործում հասարակագիտության օգուտը

Ի՞նչ է քաղաքական առաջնորդներին անհրաժեշտ իմանալ աշխարհի մասին այն պատշաճ կերպով կառավարել կարողանալու համար: Ո՞վ է կարող և ո՞վ պետք է նրանց դա ասի: Ահա այստեղ են առաջ գալիս հասարակական գիտությունները: Սակայն, քանի դեռ քաղաքական գործիչները քիչ հետաքրքրություն են դրսևորում անցյալի իրադարձությունների բացատրությունների նկատմամբ, կանխատեսումներ անելը դժվար է:


Կոլֆանգ Շորենկ

Արդի հասարակական գիտությունների ամենահավակնոտ նպատակն է մշակել տեսություններ, որոնք դիտված փաստերը բացատրում են որպես դրանց պատճառների հետևանքներ: Ի՞նչ պատճառով է, որ ծնելիությունը նվազում է տասնամյակներ շարունակ, ամբողջ Եվրոպայում կրճատվում է ընտրողների մասնակցությունը ընտրություններին, իսկ Աֆրիկայի խոշոր շրջանները չեն կարողանում զարգանալ: Սակայն քաղաքական գործիչները հետաքրքրվում են բացատրություններով միայն այն ժամանակ, երբ բացատրության առարկան գործնական նշանակություն ունի նրանց համար, թույլ է տալիս, որ տեսության շրջանակներում ներկայացված պատճառների վրա քաղաքական միջոցներով ազդեցություն գործադրվի այն ձևով, որ դրանց արդյունքները առաջ բերեն փոփոխություն ցանկալի ուղղությամբ:

Տեսությունը, որը դպրոցում ուսման առաջադիմության անկումը կապում է պատանեկության շրջանում արագացված կենսաբանական զարգացման հետ, կարող է լինել ճիշտ կամ սխալ, սակայն այն հետաքրքրություն չի ներկայացնում քաղաքական առաջնորդների համար (եթե միայն չի օգտագործվում կառավարությանը պատասխանատվությունից ազատելու նպատակով): Այլ հարց կլիներ, եթե դա բացատրվեր աշակերտների ավելի մեծ թիվ ունեցող դասարաններով: Այս դեպքում, բացահայտված պատճառը կարող էր օգտագործվել որպես լծակ կառավարության կողմից՝ սովորողների առաջադիմությունը բարելավելու համար, իսկ ընդդիմության կողմից՝ պատասխանատուներին պատասխանատվության ենթարկելու համար:

Կանխատեսումներ անելու կարողություն

Թեև քաղաքական գործիչներին քիչ են հետաքրքրում բացատրությունները, սակայն նրանց գրեթե միշտ հետաքրքրում են կանխատեսումները: Կանխատեսումները նույնպես հենվում են տեսությունների վրա և, ըստ էության, նույնպես հանդիսանում են բացատրություններ, բայց միայն ապագա վիճակների և ոչ թե ներկա կամ անցյալ: Շատ հետազոտողներ, ներառյալ՝ որոշ հասարակագետներ, համարում են, որ կանխատեսումներ անելու կարողությունը տեսության հաստատունության իրական նշան է: Եվ քանի որ քաղաքական գործիչները շարունակաբար բախտախաղի են դնում ապագան, ապա նրանք նույն կարծիքին են:



Այսպիսով, այն գիտնականները, որոնք խոստանում են տեղեկություններ գալիք տարում տնտեսության աճի կամ կրճատման տոկոսի կամ հաջորդ 10 տարիների ընթացքում ամենամեծ պահանջարկը վայելել հավակնող մասնագիտությունների մասին, կարող են ակնկալել ոչ միայն ուշադիր ունկնդրողներ, այլ նաև շռայլ ֆինանսական հատկացումներ կառավարությունների և քաղաքական կուսակցությունների կողմից:

Այդուհանդերձ, կան հիմնավոր պատճառներ կասկածելու, որ հասարակական գիտությունների՝ ապագան կանխատեսելու կարողությունը ոչ միայն հեռու է բավարար լինելուց, այլ նաև հիմնովին սահմանափակ է: «Ինչու՞ ոչ մեկը սա չէր կանխատեսել», հարցրեց Բրիտանիայի թագուհին 2008 թվականի նոյեմբերին Լոնդոնի տնտեսագիտության դպրոց այցի ժամանակ՝ նկատի ունենալով համաշխարհային ֆինանսական ճգնաժամը: Գիտնականները, ներկայացնելով իրենց սեփական շահը, կարող էին պատասխանել՝ հետազոտությունների մեջ չափազանց քիչ ներդրումների պատճառով: Սակայն, նույնիսկ տնտեսագետներն այդ ժամանակ գործնական չգտնվեցին. ցնցումը հավանաբար չափազանց մեծ էր:

Թագուհու հարցին ավելի լավ պատասխան կլիներ այն, որ ոմանք դա իսկապես կանխատեսել էին, քանի որ յուրաքանչյուր իրադարձություն միշտ էլ կանխատեսվում է որոշ մարդկանց կողմից, եթե բավականաչափ մարդ կա այդ մասին կանխատեսում անող:

Այն պարագայի, որ նրանք կարող էին և չիմանալ հարցի պատասխանը, խելքին մոտ բացատրություններից մեկն էլ այն է, որ խնդիրը ոչ թե հետազոտությունների պակասի, այլ ավելի շուտ հարցի էության մեջ է՝ մարդկային աշխարհի բնույթի մեջ, և այն գիտելիքի մեջ, որը մենք, լավագույն դեպքում, կարողանում ենք ձեռք բերել նրա մասին: Մինչդեռ այսօր խոսակցություններ են գնում այն մասին, որ հասարակական գիտություններն ի գործու չեն անելու «կետային կանխատեսումներ», այսինքն՝ կանխատեսումներ

առանձին դեպքերի մասին: Թեև կետային կանխատեսում անելը, ըստ երևույթին, հետազոտության մեջ միակ բանն է, որը կհետաքրքրե քաղաքական գործիչներին:

Գոյություն ունեն հիմնավոր, տրամաբանական պատճառներ, թե ինչու հասարակական գիտությունները շատ բան չեն կարող ասել առանձին դեպքերի մասին: Այդ հանգամանքը չի կարող փոխվել նույնիսկ նրանց գիտական մեթոդների ամենահանճարեղ կատարելագործման դեպքում: Սոցիալական գործընթացների հետազոտության մեջ միշտ էլ դեպքերը ավելի քիչ կլինեն, քան այն գործոնները, որոնցով դրանք կարելի է բացատրել՝ այդպիսով անխուսափելիորեն առաջ բերելով իրերի ցանկացած տվյալ վիճակի ավելի քան մեկ պատճառաբանված բացատրություն: Եվ ամեն ապագա վիճակի հանդես է գալիս որպես բազմաթիվ գործոնների անդուզական փոխադրեցության անդուզական արդյունք՝ որպես յուրօրինակ իրավիճակ, որում չկա նորմալ բաշխում, և որի բնորոշ առանձնահատկությունները հնարավոր չէ ածանցել ընդհանուր օրենքներից:

Սա կարելի է նաև արտահայտել ավելի դիպուկ՝ մարդկային աշխարհի բուն պատմական իսկությունը հաստատվում է նրանով, որ անհնարին է պատկերացնել մի ապագա, որը հնարավոր է ճշգրտել՝ հաշվի առնելով համընկնումները: Պատմությունը կերտվում է իրադարձությունների միջոցով, որոնք կարող են և չպատահել, և այդ դեպքում կգրվի ուրիշ պատմություն: Առանց Առաջին համաշխարհային պատերազմի և ռուսական հեղափոխության, որոնց պատահելը պարտադիր չէր, ըսաներորդ դարը կընթանար այլ ուղով, իսկ արդի կապիտալիզմն այլ կերպ կզարգանար. սակայն, ինչով այն կլիներ տարբեր, ոչ ոք չի կարող իմանալ:

Պատմական անցքերը, ինչպիսիք են կոմունիզմի փլուզումը 1989 թվականին, Գերմանիայի վերամիավորումը կամ ներկա ֆինանսական ճգնաժամը, կարող են հետագայում մեկնաբանվել որպես



հավանական կամ նույնիսկ հայտարարվել անխուսափելի, սակայն մինչև դրանց տեղի ունենալը այլ դեպքեր կարող են կանխել, հետաձգել կամ փոփոխել դրանք, և ոչ ոք երբևէ չի էլ կարող իմանալ, որ դրանք գրեթե պատահելու եզրին էին:

Հասարակությունը որպես մեքենա

Այն, ինչը քաղաքական գործիչները կնախընտրեին նույնիսկ ավելի, քան կանխատեսումները, հասարակական զարգացումները կառավարելու տեխնիկական հրահանգներն են: Քաղաքական գործիչները ցանկանում են հասարակությունը տեսնել որպես պտուտակներ ունեցող մի մեքենայի՝ պտուտում ես ճիշտ պտուտակը, և աշխարհին աշխատում է քո ուզածի պես: Գիտության գործը պտուտակների անվանումներն այնպես գրելն է, որ դրանք ընթեռնելի լինեն: Որտեղից են գալիս աշխարհի այս մեխանիստական ընկալումը և դրանից սնունդ առնող սոցիալական ուտոպիաները: Պարզ է, որ դեռ շարունակում է փայփայվել գիտական մեթոդներով վարքագիծը կառավարելու մասին երազանքը, մեթոդներ, որոնք առաջ չեն բերում հակազդեցություն, քանի որ ազդակիրները պարզապես չեն նկատում դրանց կիրառվելը: Շատերը հավատում են, որ այս մեթոդները մշակելը ճշմարիտ գիտական հասարակագիտության բուն խնդիրն է: Օրինակ՝ բնական գիտությունների բնագավառի գործընկերները հասարակագետներից հաճախ պահանջում են այնպիսի եղանակներ, որոնք նրանք կարող են կիրառել հասարակության մեջ «տեխնոլոգիայի հանդեպ թշնամանքը» վերացնելու համար: Ի վերջո, սա այն բնագավառն է, որտեղ հասարակագետները պարտավոր են իսկապես իմանալ իրենց անելիքը:

Սակայն ի տարբերություն բնական կամ ճարտարագիտական գիտությունների, հասարակական գիտությունների բնագավառը կազմված է սուբյեկտներից, որոնք ունակ են կատարելու իրենց սեփական դիտարկումները և դիմելու գործողությունների, և որոնք ոչ մի կերպ անտարբեր չեն այն բանի նկատմամբ, թե գիտությունն ինչ է պնդում իրենց մասին և ինչ նպատակներով են կառավարություններն օգտա-

գործում այդ հայտնաբերված փաստերը: Մարդիկ հասկանում են իրենց գործողությունները կառավարելուն ուղղված փորձերը և այդ փորձերին վերագրում են մտադրություններ: Եվ իրենց հերթին, պատասխանում են իրենց սեփական մտադրություններով:

Հասարակական գիտությունների՝ ապագան գուշակելու անընդունակությունը համարժեք է ինքնորոշվող սուբյեկտների կողմից կառավարելու գիտափորձերին արձագանքելու անկանխատեսելիությանը: Հասարակագիտական տեսությունները հնարավոր չէ գաղտնի պահել: Դրանց կիրառումը վարքագիծը կառավարելու նպատակով վաղ թե ուշ նկատվում է: Երբ դա տեղի է ունենում, տեսության կիրառման ետևում ընկած պատճառները քննվում են և տրվում է պատասխան՝ կանխատեսված դիտավորությամբ:

Օրինակ՝ Հոթորնի հայտնի փորձերում (1924–1932 թվականներ) ներգրավված գիտնականները պնդում էին, որ ըստ իրենց հայտնաբերածի, կին աշխատողները ավելի արագ ու լավ են աշխատում նույնիսկ առանց աշխատավարձի ավելացման, եթե նրանց հետ վարվում են սիրալիրությամբ և աշխատավայրում պատերը ներկված են դեղին գույնով: Սակայն, երբ աշխատողների շրջանում խոսակցություններ տարածվեցին այն մասին, որ ղեկավարությունը պարզապես ցանկանում է տնտեսել դրամը բարի խոսքերի ու դեղին ներկի միջոցով, նրանք պահանջեցին աշխատավարձի ավելացում և հայտարարեցին գործադուլ: Փաստը, որ հասարակագիտական տեսությունները կարող են հասու լինել աշխարհին, որը իրենք վերլուծում են, այս կամ այն կերպ ազդում է դրանց հավաստիության վրա:

Սակայն սա չի նշանակում, որ հասարակական գիտությունները քաղաքական տեսակետից անպայմանորեն անօգուտ են, այլ զուտ այն, որ գիտնականների իսկ կողմից այդքան բարձր գնահատվող տեսություն կառուցող հետազոտությունները չէ, որ կարող են նպաստել քաղաքականության մշակման գործընթացի բարելավմանը: Թեև



սոցիալական հարցերը հաշվելը, չափելը և դիտելը կարող է դատարկ բան թվալ ումանց, դա բոլորովին էլ այդպես չէ:

Պետությունը չունի տվյալներ հավաքելու մենաշնորհ

Արդի պետությունը և ժողովրդավարական դիսկուրսը շատ առումներով կախված են հասարակության վիճակի մասին տեղեկություններից, որոնք պատրաստի գոյություն չունեն և որոնք հավաքելը հաճախ չափազանց բարդ է ու մեծ փորձագիտական գիտելիք է պահանջում: Քաղաքական գործիչներին անհրաժեշտ տեղեկությունների միայն մի փոքր մասն է ուղղակիորեն հայտնի դառնում պետության սեփա- կան վարչական փաստաթղթերից, ասենք, ծնունդների և ապահար- զանների թիվը կամ ցանկացած տեսակի սոցիալական նպաստներ ստացողների թիվը, դպրոցի բարձր դասարանների շրջանավարտների միջին գնահատականները կամ թոշակառուների տարիքային կազմը: Մակայն, ավելի հաճախ պետությանը թույլ չի տրվում կամ պետությունը չի կարող ինքնուրույն հավաքել կարևորագույն տեղեկություններ, ինչպես օրինակ՝ ներգաղթած ծնողներ ունեցող նորածինների թիվը կամ թմրամոլության տարածվածության իրական աստիճանը:

Այլ ցուցանիշներ, որոնք հասարակ մարդկանց համար կարող են բացարձակապես խնդրահարույց չթվալ, անհրաժեշտ է որոշել հաշվելու բարդ գործողությունների միջոցով, որոնք անընդհատ կատարելագործում են պահանջում: Դրանցից են, օրինակ, համախառն ներքին արդյունքը, ինչպես նաև բնակչության թիվը, որն անմիջականորեն չի հաշվվել 1981 թվականի (Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետություն) և 1987 թվականի (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) վերջին մարդահամարներից ի վեր, իսկ հիմա պարզապես արտարկվում է՝ կիրառելով բարդ, քիչ թե շատ ընդունելի մեթոդներ: Պատճառն այն է, որ հասարակությունը ընդդիմանում է իրեն հաշվելուն, ինչը ևս մեկ օրինակ է այն բանի, թե այդ բնագավառում որքան ակտիվ դեր է խաղում հասարակական գիտության սուբյեկտը իր պատասխանով:

Այսպես, քաղաքական կարևորություն ունեցող շատ հարցեր, ինչպես օրինակ՝ բնակչության մեկ շնչի հաշվով տնտեսական աճը, ծնելիության կամ ներգաղթի մակարդակը կամ գործազրկության ցուցանիշը, հայտնի են շատ ավելի քիչ ստույգությամբ, քան սովորաբար ենթադրվում է: Ի դեպ, կան դեպքեր, երբ տարիներ շարունակ կառավարությունները փորձել են լուծել խնդիրներ կամ ընտրողների կողմից պատասխանատվության են կանչվել այնպիսի խնդիրների համար, որոնք, վիճակագրական տվյալների հետագա վերստուգումից հետո, պարզվել է, որ փաստորեն իրականում ընդհանրապես խնդիր չեն հանդիսացել:

Սոցիալական իրականության պաշտոնական նկարագրությանը նպաստող որոշումները և շահերը տեսանելի դարձնելու միակ եղանակը անկախ հասարակագիտության համակարգն է: Միայն այդպիսի համակարգն է ունակ ապահովելու անհրաժեշտ բազմակարծությունը, որի միջոցով զուտ քաղաքական առումով խնդրահարույց հարցերը կարելի է տեսանելի դարձնել կամ որի միջոցով հնարավոր է ցույց տալ, թե ինչպես անչափ փոքր փոփոխությունները, օրինակ՝ գործազրկության սահմանման մեջ կամ զբաղվածության կենտրոնների կողմից աշխատանքի համար դիմորդների դասակարգման մեջ, կարող են բարձրացնել կամ իջեցնել գործազրկության ցուցանիշը:

Նույնը վերաբերում է աղքատության և անհավասարության չափմանը կամ սովորողների և դպրոցների առաջադիմության կամ աշխատողների՝ աշխատանքային պայմաններով բավարվածության մակարդակների որոշմանը: Կարճ ասած, առանց հասարակության կողմից հենց իր՝ հասարակության մասին շարունակական, մեթոդաբանորեն ընդունելի, խիստ կարևոր տեղեկություններից օգտվելու հնարավորության ընձեռման, քաղաքական դիսկուրսը նույնիսկ ավելի բովանդակազուրկ կլինի, քան այժմ հաճախ կա:

Տեղիմակի մասին Վոլֆգանգ Շտրեկը, ծնվ. 1946 թվականին, ի թիվս այլ ոլորտների, կատարում է հետազոտություններ քաղաքատնտեսության և տնտեսական սոցիոլոգիայի բնագավառներում: 1988 թվականից ի վեր նա դասավանդում էր Վիսկոնսինի համալսարանում, Մեդիսոն, իսկ 1993 թվականին դարձավ Բեռլինի Վիսենշաֆտսկոլեգի իսկական անդամ: Շտրեկը իրավիրվել է դասախոսություններ կարդալու նաև բազմաթիվ միջազգային համալսարաններում՝ նախքան 1995 թվականին Մաքս Պլանկի հասարակագիտության ինստիտուտի տնօրեն նշանակվելը:

Տեքստը հանդիսանում է աշխատանքային փաստաթղթի 09/11 (ISSN 1864-4341) կրճատված տարբերակը:

Ժողովրդավարության սկզբունքների ամրապնդում

Նինո Աբգիանիձեն դոկտորանտուրայի ապիրանտ է Ցյուրիխի համալսարանի Ժողովրդավարության հետազոտական գիտելիքի ազգային կենտրոնում: Նրա համար ակնհայտ է, որ Վրաստանը դեռ երկար ուղի ունի անցնելու, մինչև երկրում ամրապնդվեն ժողովրդավարության գլխավոր սկզբունքները: Նասարակական գիտությունները կարող են ներդրում ունենալ այս գործում:

Նինո Աբգիանիձեն երբեք չի մոռանա այդ շաբաթ օրվա երեկոն: Դա 2010 թվականի մարտի 13-ն էր, և վրացուհին երեկոն անց էր կացնում ընկերների հետ երկրի մայրաքաղաք Թբիլիսիում: Նեռախոսը զանգեց: Մայրն էր. «Ռուսները հարձակվում են: Նախագահը զոհվել է»: Վրաստանի և Ռուսաստանի միջև պատերազմից երկու տարի հետո հարաբերությունները կարծես թե նորից են սկսում սրվել: Նինոն իր ընկերների հետ միացնում է հեռուստացույցը, և կառավարամետ «Իմեդի» հեռուստաալիքը ցույց է տալիս քաղաք մտնող ռուսական զորքերը: Քիչ անց Վրաստանի բջջային ցանցը բառացիորեն պայթեց: Մարդիկ բազմությամբ դուրս թափվեցին փողոցները՝ շվարած ու վախեցած:

Կես ժամ հետո իրավիճակը պարզվեց. այդ պատմությունը հորինված էր: Նախագահ Միխայիլ Սահակաշվիլին ողջ է, և ոչ մի ներխուժում տեղի չի ունեցել: Քիչ անց «Իմեդի» հեռուստաալիքով հայտարարվեց, որ հեռարձակումը նպատակ ուներ միայն ցույց տալու, թե ինչ կարող էր լինել, եթե նախագահը սպանվեր: Այնուամենայնիվ, շատ վրացիների կարծիքով հեռարձակումը միտված էր խուճապ առաջ բերելուն և պարզ մատնացույց անելուն, թե ով է թշնամին, այսինքն՝ ռուսները:

Դեռ երկար ճանապարհի կա առջևում
Նինո Աբգիանիձեի համար այս օրինակը ցույց է տալիս, որ Վրաստանը դեռ երկար ճանապարհի ունի անցնելու մինչև ժողովրդավարության գլխավոր սկզբունքները, այդ թվում՝ լրատվամիջոցների ազատությունը, հիմնովին հաստատվեն: «Վրաստանում լրագրողների մի մասն անկախ չէ: Նրանք չեն իրականացնում իրենց առաքելությունը և թույլ են տալիս իրենց որպես գործիք օգտագործել»: Հշմարտությունը գոհաբերելը խաղաղ պայմաններում սխալ մոտեցում է:

Լրագրողներին անհրաժեշտ է ավելի լավ վերապատրաստել. զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները պետք է լավ տեղեկացված լինեն իրենց իրավունքների ու պարտականությունների մասին: «Սա նույնպես խնդիր է հասարակական գիտությունների համար, տվյալ դեպքում՝ լրատվության միջոցներն ուսումնասիրող գիտությունների համար»: Այնպիսի երկրներում,

ինչպիսին Վրաստանն է, որոնք անցնում են փոփոխությունների միջով և չունեն ժողովրդավարական ավանդույթներ որոնց վրակարող են հենվել, հասարակական գիտությունները հատկապես կարևոր ներդրում են կատարում այդ գործընթացի հաջողությունը ապահովելու ուղղությամբ: Անցումային երկրները ենթարկվում են բազմաթիվ բարդ փոփոխությունների, և «այդ փոփոխությունները պետք է հիմնված լինեն փաստերի վրա»:

Իր դոկտորանտուրան սկսելով 2011 թվականի հուլիսին Ցյուրիխի համալսարանի Ժողովրդավարության հետազոտական գիտելիքի ազգային կենտրոնի մասնաճյուղի հովանավորությամբ՝ հաջորդ մի քանի տարիների ընթացքում Նինո Աբգիանիձեն խորացված կերպով կուսումնասիրի զանգվածային լրատվության միջոցների դերը հետբախումային իրավիճակներում: Նրա հետազոտությունները ֆինանսավորում են Կովկասի Ակադեմիական Շվեյցարական Ցանց (ԿԱՇՑ) ծրագիրը և Ժողովրդավարության հետազոտական գիտելիքի ազգային կենտրոնը: Նրա թեզն առնչվում է լրատվամիջոցների դերին հավաքական ինքնագիտակցության ձևավորման գործում: Ի՞նչ ազդեցություն ունեն ՋԼՄ-ները: Ինչպե՞ս են կարող դրանք բորբոքել կամ պատվարել բախումը: Այս հարցերին պատասխանելու համար նա մանրամասն կուսումնասիրի և կվերլուծի Վրաստանի և Բոսնիա-Շերցեգովինայի մասին հայտնի տեղեկությունները՝ կիրառելով հասարակագիտական գործիքներ:

Մտածում էր այլ մասնագիտության մասին


«Իսկապես, բավական զարմանալի է, որ ես հասարակագետ եմ դարձել», ասում է Նինո Աբգիանիձեն և բացատրում, որ իր ընտանիքում հիմնականում բժիշկներ են, ներառյալ՝ հայրը: Ժպտալով նա հիշում է, որ երեխա ժամանակ սիրում էր նայել բժշկական գրքերը և «հիանալ ամենաահավոր նկարներով»: Սակայն մի օր հասկացավ, որ այլևս չի հանդուրժում արյան տեսքը և վստահ է, որ ցանկանում է սովորել ոչ թե բժշկություն, այլ ուրիշ մասնագիտություն: Սկզբում ընտրեց պատմագիտությունը, ապա փոխեց հասարակական գիտությունների Թբիլիսիի Իվան Զավախիշվիլու անվան պետական համալ-

սարանի հասարակական գիտությունների կենտրոնում: Նա չի ավստում իր որոշման համար: Ի դեպ, ընդհակառակը. «Որքան ավելի եմ խորանում դասընթացի մեջ, այնքան ավելի եմ հասկանում, որ Հիշտ ընտրություն եմ կատարել»:

Վերադարձ Վրաստան

Իսկ ի՞նչ պլաններ ունի դոկտորականը ավարտելուց հետո: «Դրանից հետո ուզում եմ վերադառնալ Վրաստան: Կցանկանայի նպաստել երկրի առաջընթացին»: Այսօր Վրաստանում հետազոտողները հարցեր տալիս հակված են կենտրոնանալու սեփական երկրի վրա: Սակայն այդ հանգամանքը դժվարացնում է միջազգային ճանաչման ձեռք բերումը: Այդ պատճառով էլ կարևոր է, որ վրաց գիտնականները խնդիրները քննարկեն իրենց արտասահմանցի գործընկերների հետ: Միայն այս ձևով նրանք կկարողանան կապեր հաստատել, ինչը էական է լուրջ հետազոտություններ կատարելու համար:

Այդպիսի ծանոթություններ հաստատելը և անձնական կապեր ստեղծելը շատ ժամանակ է պահանջում և քիչ արդյունք է տալիս սկզբնական փուլում, քանի որ խնդիրը հիմնականում մյուսների կատարած հետազոտությունների թեմաները պարզելն է: Այդուհանդերձ, միայն այս եղանակով է կարելի հետազոտության բնագավառում համագործակցությունը բարեհաջող կերպով հասցնել երկրորդ փուլին: «Նույս ունեն, որ դոկտորանտուրայի ընթացքում ձեռք բերելիք կապերի, գիտելիքների ու փորձի միջոցով ես կկարողանամ որոշ փոքր ներդրում ունենալ հասարակական գիտությունների զարգացման գործում Վրաստանում»:



Հասարակական գիտությունները և առողջ բանականության մշակույթը



Ի՞նչն է պակասում Վրաստանին որպես երկրի: Հաճախակի նշվում են բազմաթիվ թերություններ՝ ակնառու թերացումներ անվտանգության հարցերում, անբավարար տնտեսական զարգացում, բացթողումներ ժողովրդավարության ոլորտում: Գոյություն ունի նաև հասարակագիտական գիտելիքի զգալի պակաս՝ առաջարկը խիստ ետ է մնում պահանջարկից:

Գիա Նոդիա

Այս խնդիրները ակնհայտորեն տարբեր մասշտաբների են: Սակայն արդյո՞ք դրանք համեմատելի են: Արդյո՞ք հասարակական գիտությունների զարգացումն ու խթանումը ինչ-որ տեղ ունի ազգային առաջնահերթությունների ցուցակում: Ո՛չ, հասարակական գիտությունները չեն կարող փրկել Վրաստանը: Ես թերահավատորեն եմ մոտենում այն բանին, որ գիտնականներն ի վիճակի են մշակելու ազգային զարգացման համապարփակ ծրագիր, որը թույլ կտա որոշումներ կայացնողներին Վրաստանը դարձնել ազատ, բարգավաճ ու ժողովրդավարական:

Իրականում այն, որ հասարակագետները կարող են փրկել աշխարհը կամ գոնե մեկ առանձին երկիր, առասպել է, ինչն էլ հենց խնդրի մի մասն է: Խորհրդային Միությունը, որի ժառանգությունը Վրաստանը դեռևս փորձում է հաղթահարել, հիմնված էր ճիշտ այդ առասպելի վրա. հասարակագիտական տեսությունը ճանապարհ է հարթում դեպի փրկություն: Այս առասպելածին դոկտրինը խափանում էր իսկական հասարակական գիտության որևիցե ավանդույթի ստեղծումը: Արդյունքում 20 տարի առաջ Վրաստանը ստիպված եղավ սկսել գրոյից:

Վրաստանի պարագայում, մի երկիր, որի ամբողջ ուշադրությունը կլանված էր բախումներով ու գոյատևմամբ, նոր հասարակագիտությունը առաջ եկավ որպես խիստ մասնագիտական, էմպիրիկ հետազոտական ծրագիր՝ հանձնարարված գործարարության, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների կողմից: Թեև վրաց հասարակությունը անցավ մի շարք խոր վերափոխումների միջով,

որոնք չափազանց ցավոտ էին, ինչպես նաև դժվարին՝ ինտելեկտուալ առումով, գրեթե չկար մեկը, որը հանգամանորեն ու կանոնավոր կերպով ուսումնասիրեր այդ վերափոխումները: Այն մարդիկ, որոնք սովորաբար կազմում են մտավորական դասը, մեկնել էին արտասահման կամ ապաստանել հասարակական կազմակերպություններում:

Հասարակական վերափոխումները քննարկելիս գլխավորապես գործում էր գոյություն ունեցող ինտելեկտուալիզմի հարացուցքը, որը խորհրդային դարաշրջանի մեկ այլ ժառանգություն է: Դրա առանձնահատկություններից են թուլությունը առասպելների ու դավադրության տեսությունների հանդեպ և հոժարությունը հանգելու հեռուն գնացող հետևությունների չստուգված անձնական դիտարկումների հիման վրա: Սա հաճախ տեղի էր ունենում նորահայտ ինստիտուցիոնալ հարացուցքի շրջանակներում, որը ես կանվանեի «հասարակական կազմակերպությունների ինտելեկտուալիզմ»՝ սոցիալական գործընթացների գնահատումը պետք է անբաժանելիորեն կապված լիներ անհրաժեշտ քաղաքական ծրագրիը պաշտպանելու հետ:

Միայն վերջին տարիներին է, որ համալսարանական համակարգում լայնածավալ բարեփոխումների իրականացումից հետո հասարակագիտությունը սկսեց զարգանալ որպես գիտական բնագավառ և կապեր ստեղծել միջազգային գիտական համայնքի հետ: Կարողությունների պակասը հիմնական խնդիրն է, սակայն առաջին անգամ համալսարանները փաստացի ինչ-որ բան են անում սրան



հակազդելու համար: Այս գործընթացի հաջողությունը ապահովելու մեջ կարևոր դեր են խաղում վրացական համալսարանները համաշխարհային առաջավոր փորձի և գիտական նվաճումների կենտրոնների գործընկերների հետ կապող միջազգային ծրագրերը:

Առողջ բանականության մշակույթը

Ի՞նչ օգուտ կրերի երկրին հասարակական գիտությունների զարգացումն ու առաջընթացը: Իհարկե, այս առաջընթացը կարող է նպաստել կոնկրետ խնդիրների լուծմանը մի շարք տարբեր ձևերով: Սակայն ես կանդեի, որ գլխավոր հնարավոր օգուտը կապված կլինի ստաժելակերպի ընդհանուր փոփոխության հետ: Այն, ինչի կարիքը Վրաստանը որպես երկիր ունի, դա առողջ բանականության մշակույթն է: Ոչինչ այնքան լավ չի զարգացնի այս մշակույթը, որքան դատողությունները փաստերի և ոչ թե «արժեքների» կամ քաղաքական ծրագրերի վրա հիմնելու սովորության արմատավորումը:

Բոլորին հայտնի խնդիր է, որ վրացական քաղաքականությունը հեռու է ռազմավարական հարցերից: Փաստորեն չկա քաղաքական բանավեճ երկրում խնդիրները լուծելու շուրջ. միայն վիճաբանում են այն մասին, թե ով է բարոյապես ավելի վատը՝ կառավարությունը, թե ընդդիմությունը: Հասարակական գիտությունները իրենք չեն կարող հաղթահարել այս դժվարին կացությունը: Սակայն վրաց հասարակության մասին հիմնական տվյալների, ինչպես նաև տարբեր խնդիրների միջև պատճառների ու կապերի վերաբերյալ մասնագիտական հետազոտությունների ու քննարկումների բացակայությունը գրեթե անհնարին է դարձնում ըստ էության քննարկումները:

Վերցնենք մեկ օրինակ. Վրաստանում ժողովրդավարացման հարցերը հանդիսանում են թե՛ քաղաքական բանավեճերի առարկա, և դա իր պատճառներն ունի: Մյուս կողմից, նախագահ Միխայիլ Սահակաշվիլին վերջերս սահմանել է «արդիականացումը» որպես

երկրի գլխավոր նպատակ, դրանով սկիզբ տալով ենթադրությունների, որ թերևս դա միգուցե նշանակում է ժողովրդավարական բարեփոխումների ծրագրից հրաժարում: Այս երկու գաղափարները՝ և՛ ժողովրդավարացումը, և՛ արդիականացումը, հասարակագիտական հասկացություններ են, որոնք ունեն տեսականացման և համեմատական հետազոտության լուրջ ավանդույթ: Դիտարկելով Վրաստանում զարգացումները համեմատական տեսանկյունից՝ հասարակագետները կարող են այս հարցերի շուրջ բանավեճերը դարձնել ավելի կոնկրետ ու արգասաբեր:

Հասարակագիտությունը պետք է տրամադրի հայելի, որի մեջ երկիրը հնարավորություն կունենա իրեն նայելու նախքան բարեփոխումներ նախաձեռնելը: Այն պետք է առաջ բերի տեղեկությունների կրիտիկական զանգված և սկիզբ տա քննարկումների՝ հիմնված ավելի շուտ փաստերի, քան տարտամ խորհրդածությունների ու խմբային ծրագրերի վրա: Վրաստանում մենք դեռևս չենք հասել այդ կետին:

Նեդիակի մասին Գիա Նոդիան քաղաքականության պրոֆեսոր է և Թբիլիսիի Իլյա Ըավձավաձեի անվան պետական համալսարանի Կովկասագիտության միջազգային քոլեջի տնօրենը: Նա նաև Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման Կովկասի ինստիտուտի հիմնադիրն է: Նա հրատարակել է աշխատություններ տարածաշրջանում անվտանգության, Կովկասում պետության շինարարության և ժողովրդավարացման վերաբերյալ: 2008 թվականի փետրվար ամսից մինչև դեկտեմբեր ամիսը Գիա Նոդիան զբաղեցրել է Վրաստանի կրթության և գիտության նախարարի պաշտոնը:



Նասարակական գիտությունները հասարակության հայելին են

Նասարակական գիտությունները մեզ թույլ են տալիս ուշադրության կենտրոնում պահել մեր իսկ հասարակությունը և հարցականի տակ են առնում ու քողագերծում առասպելները, որոնք տարածվում ու վերարտադրվում են ցանկացած հասարակության մեջ:

Պարոն Զեդանիա, որքա՞ն ժամանակ է, որ Վրաստանում գոյություն ունեն «ագատ» հասարակական գիտություններ:

Սկսած 1990–ական թվականների սկզբից: Խորհրդային Միությունում հասարակական գիտություններ ըստ էության գոյություն չունեին. դրանց փոխարինում էր մարքսիստական գաղափարախոսությունը: Գիտության մյուս բնագավառներում դրությունը բավական այլ էր՝ լավ ֆիզիկոսը կամ քիմիկոսը մեծ հարգանք էին վայելում: Սակայն ցանկացած հետազոտող, որը ցանկանում էր աշխատել, ասենք, սոցիոլոգիայի բնագավառում գիտական չափորոշիչներին համահունչ, գիտության մեջ մնալու քիչ հավանականություն ուներ: Լինում էին ժամանակներ, երբ հետազոտողները գիտական գործունեության համար վճարում էին կյանքի գնով: Այս ամենը, իհարկե, լրջորեն կասեցնում էր հասարակական գիտությունների զարգացումը Վրաստանում և ամբողջ Խորհրդային Միությունում:

Ինչպիսի՞ն է հասարակական գիտությունների վիճակը ներկայումս:

Դեռևս գոհացուցիչ չէ: Երիտասարդ գիտնականների պատրաստումն ու նրանց առաջխաղացումը երկարաժամկետ հեռանկարում դժվար է, քանի որ մենք իրականում չի վիճակի չենք առաջարկելու հետաքրքիր ակնկալիքներ, նույնիսկ երիտասարդ, խոստումնալից գիտնականներին: «Ուղեղների արտահոսքը» նոր խնդիր է, որը առաջ եկավ «Wende»-ի՝ երկաթե վարագույրի անկման ժամանակահատվածից: Ոչ միայն այն իմաստով, որ որոշ գիտնականներ գաղթում են արտասահման, այլ նաև թողնում են գիտությունը և աշխատանքի անցնում այլ

հաստատություններում, օրինակ՝ Վրաստանում ակտիվորեն գործող միջազգային կազմակերպություններում: Իրեն զգացնել է տալիս նաև հին ժառանգությունը՝ դեռևս ետ են մնում բնական գիտություններից: Սա, օրինակ, երևում է ամբողջ աշխարհում տպագրվող աշխատությունների քանակից, որը զգալիորեն փոքր է հասարակական գիտությունների դեպքում: Վրաց հասարակագետների միայն մի քանի հրատարակություններ են արժանացել միջազգային հետաքրքրության:

Որո՞նք են սրա հետևանքները:

Արդյունքում, վրաց հասարակագետների համար ոչ միայն դժվար է միջազգային գիտական համայնքի մաս դառնալը, այլև որպես լրացուցիչ հետևանք նրանք ընդհանրապես անկարող են իրականացնել իրենց հասարակական գործառնությունը:

Ըստ ձեզ, ո՞րն է այդ գործառնությունը:

Կարելի է նշել մի քանի էական կողմ: Առաջին հերթին, հասարակական գիտությունները թույլ են տալիս մեզ ուշադրության կենտրոնում պահել մեր իսկ հասարակությունը: Նրանք հանդիսանում են հասարակության հայելին և փորձում են պատասխանել հիմնական հարցերին՝ ո՞վ ենք մենք, ի՞նչ պատմական գործընթացներ են մեր հասարակությունը հանգեցրել ներկայիս արժեհամակարգին ու մշակութային կերտ-վածքին: Նատկապես Վրաստանի նման երկրում, որտեղ ժողովրդավարության հասկացությունը հնարավորու-

թյուն չի ունեցել զարգանալու դարերի ընթացքում, հասարակական գիտությունների առաքելությունն է քննադատական հայացք պահել զանազան պետական ու սոցիալական հաստատությունների, վարչարարության, կառավարության, արդարադատության համակարգերի, ոստիկանության, քաղաքական կուսակցությունների ու լրատվամիջոցների վրա: Այդ բոլոր հաստատությունները գոյություն են ունեցել խորհրդային հասարակարգի փլուզումից առաջ, իսկ դրանից հետո նրանք պետք է ստանձնեին նոր պարտականություններ ժողովրդավարական գործընթացի շրջանակներում: Սակայն հատկապես ի՞նչ պարտականություններ: Եվ ինչպե՞ս է տեղի ունենում փոխազդեցությունը կառավարության տարբեր կառույցների միջև: Ահա այստեղ է, որ հասարակական գիտությունները կարող են որոշ պարզաբանում մտցնել: Հիմնվելով գիտական փաստերի վրա՝ նրանք կարող են առաջ քաշել ծրագրային առաջարկներ ու դրանք հարմարեցնել տվյալ առանձին երկրում կիրառելու համար: Արդարև, Վրաստանի առանձնահատկությունները պետք է հաշվի առնել:

Ո՞րն է երկրորդ կողմը:

Երկրորդ կողմը սերտորեն կապված է առաջինի հետ: Հասարակական գիտությունների կարևոր գործառնություններից է հարցականի տակ առնելն ու քողազերծելը սոցիալական և մշակութային առասպելները, որոնք արագորեն տարածվում ու վերարտադրվում են ցանկացած հասարակության մեջ, եթե դրանց դեմ գործում պայքար չի տարվում: Վրաստանում վերջին 20 տարիների ընթացքում տիրող մեծ ցնցումների ու անորոշության ժամանակաշրջանը հատկապես պարարտ հող հանդիսացավ նման առասպելների համար, որոնք հաճախ վնաս են հասցնում ազատական արժեքներին ու ժողովրդավարությանը: Եվ այստեղ հասարակական գիտությունները՝ ռացիոնալ չափանիշների վրա իրենց ամուր հենքով, հասարակական երևույթների իրենց քննադատական հայացքով ու կիրառած կատարելագործված վերլուծական մեթոդներով, հանդիսանում են հատկապես ուժեղ հակամիջոց:

Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ հասարակական գիտություններն այս առումով:

Էական կարևոր է, որ ամեն մի քաղաքացի ունենա գոնե տարրական պատկերացում հասարակության մեջ հարաբերությունների փոխադարձ ազդեցության մասին: Յուրաքանչյուր ոք պետք է կարողանա սեփականորեն ու գնահատել տեղեկատվությունը, օրինակ, էթնիկ ազգայնականության, քաղաքական դավադրության տեսությունների կամ կրոնական ֆունդամենտալիզմի մասին մտածելիս: Մի այնպիսի հասարակության մեջ, որն ունի քննադատորեն մտածելու ունակություն, նման դիքորոշումները դժվար թե համակիրներ գտնեն, իսկ այն անձինք, ովքեր տարածում են այդպիսի տեղեկություններ, չեն կարող ժողովրդավարական պետության մեջ իսկապես կարևոր դիրքեր գրավել: Իհարկե, հնարավոր չէ թույլ չտալ, որ այդ մարդիկ տարածեն իրենց կողմնակալ տեղեկությունները, սակայն այդ տեղեկատվությունն արմատավորվելու հող չի գտնի, ինչը, ի վերջո, ամենակարևորն է: Վրաստանի պես անցումային երկրներում, որտեղ կառույցներն ու արժեքները փոխվել են արմատապես ու մեծ արագությամբ, իրավիճակն այս առումով հեռու է բավարար լինելուց: Հասարակագիտական ուժեղ ավանդույթի բացակայությունը հանդիսանում է գործոն. քաղաքացիները պետք է ունենան գոյություն ունեցող հետազոտություններից և տվյալներից օգտվելու հնարավորություն, եթե սա անհրաժեշտ է քաղաքական որոշումներ կայացնելու կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար:

Կանտը լուսավորչությունը սահմանում է որպես սեփական դատողությունը կիրառելու խիզախություն: Փայլուն սահմանում է, սակայն մեր չափազանց բարդ հասարակության մեջ հարկավոր է հատուկ ինստիտուցիոնալ կառույց, որի շրջանակներում մարդը կկարողանա կրթել իր միտքը և որից նա կկարողանա փոխ վերցնել մտածողության գոյություն ունեցող ձևերը: Համալսարանները, գիտական հաստատու-



թյունները հանդիսանում են այդպիսի ինստիտուցիոնալ կառույցներ, իսկ հասարակական գիտությունները պետք է կենտրոնական դեր խաղան այդ համակարգերում:

Այդ անելու համար անհրաժեշտ են ավելի մեծ թվով բանիմաց, որակավորված հասարակագետներ: Ի՞նչ է կարելի անել Վրաստանում հասարակական գիտությունների դիրքը բարելավելու համար:

Անհրաժեշտ է փորձի շարունակական փոխանակում միջազգային գործընկերների հետ, ասենք, համատեղ հետազոտական ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև եվրոպական գիտնականների՝ Վրաստան և վրաց գիտնականների՝ Եվրոպա այցելությունների միջոցով: Օրինակ՝ կա հատուկ համալսարանական ծրագրեր զարգացնելու կարիք:

Հասարակագիտական հետազոտությունները Վրաստանում շարունակում են խոչընդոտվել այն պատճառով, որ բազմաթիվ տվյալներ պարզապես առկա չեն, որովհետև դրանք երբևէ չեն հավաքվել: Օրինակ՝ մի քանի տարի առաջ մենք փորձ արեցինք հետազոտել արժեքների փոփոխությունը Վրաստանում: Սակայն, հետահայաց ուսումնասիրություն, որը մեզ թույլ կտա հաստատել ելակետ և ներկայիս իրադրությունը դնել իր պատմական համատեքստի մեջ, դժվար է կատարել, քանի որ այդպիսի տվյալներ պարզապես գոյություն չունեն: Մենք ամեն ինչ պետք է անենք, որպեսզի ապահովենք Վրաստանում հասարակագետների գալիք սերնդին ավելի մեծ հնարավորության ընձեռումն այս առումով:

Գիգա Չեղանիան ուսումնասիրել է փիլիսոփայություն, սոցիոլոգիա և մշակութաբանություն Վրաստանում, ԱՄՆ-ում, Հունգարիայում և Գերմանիայում: Նա պոսթդոկտոր է և միևնույն ժամանակ ղեկավարում է Թբիլիսիի Իլյա Ըավճավաձեի անվան պետական համալսարանի Տոնիագիտության ինստիտուտը: Հրատարակել է մի քանի աշխատություն վրաց հասարակության վերափոխման վերաբերյալ, այդ թվում՝ արժեքիության, քաղաքական վերնախավերի, ազգայնականության և աշխարհականացման թեմաներով: ԿԱՇՑ ծրագրի շրջանակներում նա պատասխանատու է վրաց-չեխերական համագործակցության համակարգման համար:



ԿԱՇՅ ծրագիր. Սոցիալական կապիտալի դերը Վրաստանում գյուղական համայնքների զարգացման գործում

«... համապատասխան տեղի պայմանների և բնակչության բնույթի ... պետք է սահմանի, յուրաքանչյուր դեպքում, հաստատությունների առանձնահատուկ համակարգ, որը կլինի լավագույնը, թերևս ոչ ինքնին, բայց այն պետության տեսանկյունից, որի համար նախասահմանված է»:

Ժան Ժակ Ռոտտ, Հասարակական պայմանագիր

Սակայն, ինչպե՞ս է կարելի իմանալ, թե տվյալ հասարակության համար հաստատությունների որ համակարգն է ամենից լավը, եթե «տեղի պայմաններն ու բնակչության բնույթը» ուսումնասիրված չեն: Հասարակության մասին տեղեկություններ ունենալը հատկապես կարևոր է անցումային երկրներում, որտեղ նոր հաստատությունները ստեղծվում են վերևից ներքև, գրեթե զրոյից:

Խորհրդային ժամանակներում Վրաստանի գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպված էր մեծ ձեռնարկությունների տեսքով, որոնք հայտնի էին որպես կոլեկտիվ սեփականություն հանդիսացող կոլտնտեսություններ և պետական սեփականություն հանդիսացող սովխոզներ: Վրաստանը, որը ԽՍՀՄ հարավում գտնվող լեռնային հանրապետություն էր, ուներ լայնածավալ սովերային տնտեսություն: Գյուղական ընտանիքները մշակում էին փոքր հողակտորներ ու պահում էին կովեր, իսկ իրենց արտադրածի մի մասը վաճառում էին շուկայում: Այս առանձին արտադրությունների ավանդույթը պարզվեց, որ լավ սկզբնակետ է շուկայական տնտեսությանն անցնելու համար: 1990-ական թթ. սկզբին կոլտնտեսություններն ու սովխոզները անհետացան, և միաժամանակ վարելահողի մեծ մասը մասնատվեց փոքր հողակտորների ու բաժանվեց գյուղական բնակչության միջև:

Գյուղատնտեսական արտադրությունն անկում ապրեց

Սակայն, բարեփոխումները հաջողություն չունեցան: Փոքր տնային տնտեսություններն առհասարակ դարձան բնատնտեսություններ և ոչ թե շուկայական տնտեսության մասնակիցներ: Գյուղատնտեսական արտադրությունն անկում ապրեց և շարունակում է նվազել վերջին տարիներին: Անհրաժեշտ են նոր գաղափարներ արտադրողականությունը բարձրացնելու և գյուղերին գոյությունը պահպանելու հնարավորություն տալու համար:

Ապագան կախված է ռազմավարություններից, որոնք կարող են իրավիճակը տանել երկու հնարավոր ուղղություններից մեկով: Սեփական կարիքների համար արտադրող ագարակները գյուղատնտեսական գործուն ձեռնարկություններ դարձնելու համար պահանջվում է հանրային բարիքների, ծառայությունների, հատկացումների և գյուղատնտեսության բնագավառում համագործակցության ապահովում: Նման ռազմավարությունների կիրառման դեպքում փոքր և միջին հողակտորներին վերագրվող տնտեսական արժեքը կարող է աճել, իսկ այս հողի սեփականատերերը աստիճանաբար կարող են դառնալ տնտեսական կարևորություն ունեցող գյուղական բնակչության միջին խավ: Մեկ այլ տարբերակում, կառավարությունը կարող է խրախուսել հողի վերաբաշխումը գյուղական բնակչությունից դեպի խոշոր արտադրողները: Այս դեպքում խոշոր ձեռնարկությունները կարող են առաջատար դիրք զբաղեցնել գյուղատնտեսության մեջ:

Թե այս ռազմավարություններից որն ավելի լավ կգործի, կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ հանրային կապիտալից, որը ըմբռնվում է որպես հասարակության իր անդամների համատեղ գործողություններին նեցուկ լինելու ներքին կարողությունը:

Միասնական գործողությունը հազվադեպ է

Շատերի համար, ովքեր խորհրդային հասարակությունը սովորաբար պատկերացրել են որպես կուլեկտիվիստական, կարող է զարմանալի լինել իմանալը, որ համագործակցությունը, հատկապես միասնական գործողությունը, համեմատաբար հազվադեպ երևույթ է վրացական գյուղերում: Տրամաբանորեն կարելի է ակնկալել, որ տնային տնտեսությունների համար համագործակցությունը պետք է որ շահեկան լինի՝ միավորելով նրանց սահմանափակ միջոցները, սակայն գյուղացիները զգալի անվստահություն են դրսևորում միասնական գործողության ցանկացած ձևի նկատմամբ, որի դեպքում այս կամ այն կերպ պահանջվում է միջոցների մեկտեղում: Այս անվստահության պատճառները դեռևս լրիվ պարզաբանված չեն:

ԿԱՇՑ-ի «Սոցիալական կապիտալի դերը Վրաստանում գյուղական համայնքների զարգացման գործում» ծրագիրը նպատակ ունի խթանելու մեր պատկերացումն այդ երևույթի մասին: Այս ծրագրի շրջանակներում այցելեցինք գյուղական վայրեր՝ խոսելով մարդկանց հետ, անցկացնելով հարցազրույցներ և աշխատելով ֆոկլոր խմբերի հետ: Մեզ հետաքրքրում էին հետևյալ հարցերի պատասխանները՝ ինչպիսի՞ համատեղ գործողություններ կարելի է դիտել, այդ համատեղ գործողությունների ինչպիսի՞ օրինակափոխություններ կան, որքանո՞վ են այդ օրինակափոխությունները ինտենսիվ, ճշգրիտ և հաստատուն:

Մենք եկանք այն եզրակացության, որ ինտենսիվ սոցիալական համագործակցությունը միշտ չէ որ հավասարազոր է սոցիալական կապիտալ ձեռք բերելուն: Հավասարների միջև «հորիզոնական» համագործակցությունը կարող է գոյություն ունենալ առանց «կապիտալ» դառնալու, այսինքն՝ առանց սոցիալական ուժի՝ շուկայում հաջողության կամ քաղաքական ազդեցության փոխարկվելու: Իրավիճակը կարելի է համեմատել ավագնե ժամացույցի հետ, որտեղ գյուղի բնակիչները գտնվում են հատակին, մինչդեռ տնտեսական ու քաղաքական հնարավորությունները վերևի մասում են: Չնայած



գյուղացիները ոչ պաշտոնապես համագործակցում են ավելի ցածր մակարդակում, նրանք ի վիճակի չեն այդ համագործակցությունը փոխարկելու կապիտալի, որը նրանց հնարավորություններ կբերի: Համայնքի և համակարգի միջև նեղուղու գոյությունը խանգարում է գյուղական շրջանների հետագա զարգացմանը:

Հաջորդ քայլը հարցման անցկացումն է 20 ընտրված գյուղերի բնակչության շրջանում: Այս հարցումը ծրագրի անդամներին թույլ կտա ավելի լավ հասկանալ այն գործոնների բնույթը, որոնք կարող են նպաստել նեղուղին լայնացնելուն և համագործակցությունը վերափոխել կապիտալի:

Նեղիմակի մասին Մարինա Մուսիելիշվիլին Թբիլիսիի Հասարակագիտական կենտրոնի ղեկավարն է: Նա բազմաթիվ աշխատություններ է հրատարակել ժողովրդավարացման և ժողովրդավարական տեսության վերաբերյալ: Նա հանդիսանում է ԿԱՇՑ-ի «Սոցիալական կապիտալի դերը Վրաստանում գյուղական համայնքների զարգացման գործում» ծրագրի ղեկավարը: Ծրագիրը մեկնարկել է 2010 թվականի սեպտեմբերին և ընթացքի մեջ է լինելու մինչև 2012 թվականի օգոստոսը:



Հասարակական գիտությունները Հայաստանում Հայաստանը՝ միջազգային գիտական համայնքի անդամ

Հայաստանի գիտնականներին քիչ բան է հայտնի այլ երկրների գիտնականների կողմից արդեն նկարագրված անցումային մոդելների մասին: Արպեսզի նրանք հասկանան սեփական հասարակությունը, հարկավոր է թարգմանել դասագրքեր ու արդի հետազոտություններ և Հայաստանը դարձնել միջազգային գիտական համայնքի անդամ:

ԱԼԵՔՍԱՆԴԻ ԻՍԿԱՆԿԱՐՅԱՆ

Ինչպես նախկին խորհրդային հանրապետությունների մեծ մասում, այնպես էլ Հայաստանում հասարակական գիտությունների զարգացումը լուրջ մարտահրավեր է: Խորհրդային ժամանակաշրջանի հասարակագիտության գաղափարական խիստ կողմնակալության պատճառով խորհրդային դարաշրջանում արգելված էր գիտական ուսմունքների, տեսությունների ու թեմաների մի ամբողջ շարք՝ ետ գցելով ամբողջ բնագավառը (համեմատած, օրինակ, բնական գիտությունների կամ մաթեմատիկայի հետ): Մարքսիզմի պարզունակ ձևի պարտադիր և անվիճարկելի գերակայությունը բերեց մի իրավիճակի, երբ համալսարանական դասագրքերը հիմնված էին հնացած տեսությունների վրա, ժամանակակից հրատարակությունները հասանելի չէին, իսկ որոշ բնագավառներում ընդհանրապես չէին թարգմանվել նույնիսկ դասական նյութերը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այն գիտությունները և տեխնոլոգիաները, որոնք չէին ենթարկվել գաղափարախոսական ճնշման և, հետևաբար, ավելի լավ էին ինտեգրված միջազգային գիտական շրջանակներում, նախ և առաջ բախվեցին ֆինանսական դժվարությունների: Փոքր, աղքատացած հետխորհրդային հանրապետությունների, որոնց թվում և Հայաստանը, միջոցները այլևս չէին ներուժ ենթակառուցվածքների կամ սարքավորումների համար: Արդյունքում գիտնականները սկը-

սեցին արտագաղթել. ուղեղների արտահոսքը նախկին ԽՍՀՄ-ում մաթեմատիկայի և բնական գիտությունների բնագավառների վրա ազդող հիմնական խնդիրն է, քանի որ այս գիտնականները մրցունակ են ըստ արևմտյան չափանիշների:

Հասարակական գիտությունների ոլորտում ուղեղների արտահոսքը Հայաստանից չնչին է. ընդհանրապես արևմտյան համալսարանները լի չեն նախկին Խորհրդային Միությունից եկած պատմաբաններով կամ քաղաքագետներով այն պարզ պատճառով, որ այս բնագավառներում ԽՍՀՄ-ը չի տվել մրցունակ գիտնականներ: Հայաստանում մարքսիզմի պրոֆեսորները ներկայումս հաճախ դասավանդում են քաղաքագիտություն և այլ հասարակական գիտություններ, շատ ժամանակ նույնիսկ առանց երբևէ անցած լինելու համապատասխան մասնագիտական վերապատրաստում, այլ պարզապես անվանափոխելով իրենց դասավանդած դասընթացները: Ինչ վերաբերում է հետազոտական աշխատանքին, ապա դրա ծավալը կտրուկ նվազել է, իսկ որակը դեռ ոչ միայն չի բարելավվում, այլև որոշ դեպքերում վատթարանում է, նույնիսկ ըստ խորհրդային չափանիշների, չնչին ֆինանսավորման և հմուտ դասավանդողների պակասի պատճառով:



Իհարկե, վերջին 20 տարիների ընթացքում որոշ ուսանողներ կրթություն են ստացել Արևմուտքում, իսկ որոշ գիտնականների հաջողվել է յուրացնել արդի մեթոդաբանություններ կամ ձեռք գցել որակյալ հրատարակություններ, սակայն դա դեռ բավարար չէ ամբողջ բնագավառը փոխելու համար: Աճման կետերը բավականաչափ մեծ թվով կամ ազդեցիկ չեն նոր սերունդ ձևավորելու համար:

Նասարակական գիտությունների համար առանձին մարտահրավեր է այն, որ եթե բնական գիտությունները կամ տեխնոլոգիան կարող են զարգանալ Արևմուտքում, որտեղ կան ֆինանսներ և ենթակառուցվածքներ, իսկ աշխարհի մյուս մասերը դարձյալ կարող են դրանից օգտվել, հասարակական գիտությունների դեպքում սկզբունքը միանգամայն այլ է: Նասարակագետ գիտնականը պետք է գտնվի Նայաստանում, որպեսզի ուսումնասիրի հայ հասարակությունը, նրա զարգացումն ու ներուժը, և առաջարկի լուծումներ հասարակական անընդհատ անցման համար: Մոցիոնոլոգիան, քաղաքագիտությունը և մարդաբանությունը անհրաժեշտ բնագավառներ են, որոնք հասարակությանը հնարավորություն են տալիս մտածել իր գերակայությունների և առանձնահատկությունների մասին. պատմական անդրադարձը նույնպես կարևոր նշանակություն ունի: Մի երկրի համար, որը ցանկանում է միջազգային ասպարեզ դուրս գալ, անհրաժեշտ է նախ հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում ինքը և ինչպիսին է ցանկանում լինել:

Փոխարենը, հասարակական գիտությունների ներկայիս ծանր դրության պատճառով հասարակական դիսկուրսի որակը ընկել է անբնականորեն ցածր մակարդակի: Նայաստանի հեռուստատեսությամբ կամ ցանկացած այլ լրատվամիջոցով, ըստ էության, գրեթե անհնար է գտնել ողջամիտ վերլուծական բանավեճ քաղաքականության, պատմության, արտագաղթի կամ ազգամիջյան հարաբերությունների շուրջ: Չկա գրեթե որևէ մեկը, ում լրագրողները կարող են դիմել հավաստի կամ հիմնավորված մեկնաբանություններ անելու համար: Այս բնագավառներում ձառախոսները հիմնականում կամ

քաղաքականացած դերակատարներ են, որոնց շարժառիթները ավելի շուտ քաղաքական են, քան գիտական, կամ էլ կիսակրթված «փորձագետներ», որոնց մեկնաբանությունները երբեմն կարող են կատարելապես սյուռեալիստական հնչել: Չափից դուրս վատ է այն, որ թեմաները, որոնց շուրջ նրանք փոխափայլում են, վճռորոշ են երկրի և հասարակության բարեկեցության համար: Դրանց թվում են հարևանների հետ հարաբերությունները, եվրոպական ինքնորոշում ձեռք բերելու (կամ չբերելու) հարցը, բարեփոխումների ուղղությունն սահմանումը և առաջավոր փորձի ներդրումը տարաբնույթ բնագավառներում սկսած կրթությունից մինչև լրատվամիջոցները:

Դրա լավ օրինակ է հայ-թուրքական հարաբերությունների շուրջ դիսկուրսը, որը ներառում է մի ամբողջ շարք մտահոգություններ, բոլորն էլ հայ հասարակության համար առաջնային կարևորություն: Սակայն, քննարկումները դարձել են գրեթե բացառապես կենտրոնացած դարավոր պատմական հիշողությունների վրա, որոնք նույնիսկ պարտադիր չէ, որ կապ ունենան բանավեճի կոնկրետ թեմայի հետ: Նույն ձևով Լեռնային Դարաբաղի շուրջ հակամարտությունը, որը կարևոր նշանակություն ունի ամբողջ տարածաշրջանի համար, դեռ ըմբռնվում ու քննարկվում է «անբնակ կղզու» հարացույցի ներքո՝ իբրև մի եզակի և կատարելապես մեկուսի երևույթ: Ակնհայտ է, որ կա թե՛ աշխարհում համանման երևույթների մասին գիտելիքի, թե՛ այդ գիտելիքը սեփական հասարակության նկատմամբ կիրառելու կարողության պակաս:

Բոլոր դեպքերում, որոշ օգտակար մասնագիտական ուսումնասիրություններ Նայաստանում արվում են: Օրինակ՝ քաղաքագիտության բնագավառում կան որոշ հետազոտություններ գաղափարախոսական ուղղությունների և տեղական կառավարման վերաբերյալ: Մոցիոնոլոգները ուսումնասիրել են մի շարք հարցեր՝ սկսած արտագաղթի միտումներից, մինչև հասարակության վստահությունը: Սա բավարար չէ արևմտական փոփոխություն համարելու համար, սակայն արդեն ինչ-որ բան է:

Այս փուլում գլխավոր հիմնախնդիրը, օրինակ, քաղաքագիտության բնագավառում, այն է, որ հայ գիտնականները քիչ կամ անբավարար խորությամբ գիտելիքներ ունեն գանազան այլ երկրներում գիտնականների կողմից ուսումնասիրված և նկարագրված անցումային և զարգացման մոդելների ու հարացույցերի մասին: Այդ հայ գիտնականներին սեփական հասարակությունը հասկանալու գործում օգնելու համար անհրաժեշտ է թարգմանել դասագրքեր և ժամանակակից ուսումնասիրություններ, Նայաստանը դարձնել միջազգային գիտական համայնքի անդամ, արտասահմանյան գործընկերների հետ մասնակցել համատեղ ծրագրերի, ապահովել ուսանողների և պրոֆեսորական կազմի շարժունությունը և շատ ավելին: Նայաստանում հասարակական գիտությունների առաջընթացը չապահովվելը կխոչընդոտի երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացմանը, կնվազեցնի ներդրումների արդյունավետությունը, ներառյալ՝ գիտության և տեխնոլոգիայի բնագավառում ներդրումները:

Նեդիակի մասին Ալեքսանդր Իսկանդարյանը Կովկասի ինստիտուտի հիմնադիրներից մեկն է և տնօրենը 2005 թվականի հունվար ամսվանից առ այսօր: Կովկասի ինստիտուտը հետբուհական ակադեմիական ինստիտուտ է և գիտական կենտրոն: Իսկանդարյանի աշխատանքը կենտրոնանում է ազգային-քաղաքական հակամարտությունների, հետխորհրդային զարգացումների և պետական շինարարության հարցերի վրա նախկին ԽՍՀՄ տարածքում ընդհանրապես և Կովկասում մասնավորապես:



Նասարակական գիտությունները հասարակության «շնչառությունն են»

Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի դոցենտ Լեա Սգիերը հասարակական գիտությունների դերի մասին և այն մասին, թե ինչու հասարակագետները չափազանց քիչ են համագործակցում այն մարդկանց հետ, ովքեր կարող են օգուտ քաղել այս գիտելիքից:

Տիկին Սգիեր, ի՞նչ դեր են խաղում հասարակական գիտությունները մեր հասարակությունում:

Նրանք ունեն մի քանի դեր: Նախ, կոչված են տեսնելու լուծելիք խնդիրները, ներառյալ՝ նրանք, որոնք որպես այդպիսին թերևս դեռ չեն էլ ճանաչվել քաղաքականություն մշակողների կողմից: Ապա, նրանց դերն է վերլուծել մեխանիզմները, գործընթացներն ու կառույցները և հասկանալ, թե ինչպես է գործում հասարակությունը: Սա կարող է տեղ բացել նաև հանրային քննարկումների համար և նշել քաղաքական կառավարման հնարավորություններ: Երրորդը և, իմ կարծիքով, ամենագլխավորը, հասարակական գիտությունների դերը հասարակությունը քննադատաբար գննելը և միտումներն ու զարգացումները խստապահանջորեն դիտարկելն է: Արվեստի և լրատվամիջոցների նման հասարակական գիտություններն որոշ իմաստով հանդիսանում են հասարակության «շնչառությունը»:

Լավագույն դեպքում դրանք նպաստում են հասարակության ինքնագիտակցմանը՝ ովքեր են իրենք և ուր են կարող ու ցանկանում գնալ: Այդ պատճառով ամբողջատիրական հասարակարգերում դրանք սովորաբար ճնշվում են իշխանավորների կողմից կամ դառնում են նրանց գործիքը:

Նետևաբար հասարակական գիտություններն ու քաղաքականությունը կապված են միմյանց հետ: Սակայն ինչո՞վ են տարբերվում այդ երկու համակարգերը:

Ընդհանրապես, գիտական իմացությունն ավելի երկար պատմություն ունի, քան առօրյա քաղաքականությունը: Այն վերջինիս նման հարձակողական չէ, իսկ ներկայացրած տեսակետները չեն թելադրվում քաղաքական շահեր ունեցող խմբերի կողմից, ուստի և ազատ է քննադատաբար մոտենալու իր ուսումնասիրած հասարակությանը և տնտեսական համակարգին, այդ թվում՝ նաև ուղիներով, որոնք թերևս չհանգեցնեն որևէ ուղղակիորեն կիրառելի հետևությունների: Նասարակագիտությունն ունի նաև ժամանակ ու տեղ, և սա շատ կարևոր է, քննադատաբար ուսումնասիրելու և հետո կատարելագործելու իր իսկ գործիքները, տեսությունները, հասկացությունները, մեթոդները և այլն:

Կարո՞ղ եք բերել մասնավոր օրինակներ:

Օրինակ՝ հասարակական գիտությունները կարող են օգնել ժողովրդավարացման գործընթացների ավելի լավ ըմբռնմանը. ո՞ր գործոններն են նպաստում որոշ ժողովրդավարացման գործընթացների հաջող ընթացալույս, իսկ որոնք են դրանք կտրուկ արգելակում: Ինչո՞ւ է այդ գործընթացը հաջողության հասնում որոշ երկրներում, իսկ մյուսներում՝ ոչ: Նրանք մեզ կարող են նաև օգնել հասկանալու բնակչության որոշակի խմբերի դրությունը, օրինակ՝ «աշխատող աղքատների» վիճակը. հատկապես ովքե՞ր են նրանք, ինչպե՞ս են հայտնվել այդ վիճակում, ի՞նչ է կարելի անել այդ ուղղությամբ:

Պետությունը նույնպես հավաքում է որոշ տվյալներ, որոնք կարող են պատասխան տալ այդ հարցերին: Արդյո՞ք հասարակական գիտությունների ձեռք բերած տվյալները ավելի հուսալի են, քան պետության կողմից հավաքածը:

Դա իսկապես կախված է համատեքստից: Արևմտյան երկրներում էլ կան հաստատություններ, որոնք հավաքում են գիտական չափանիշներին համապատասխանող բարձր որակի տվյալներ, Շվեյցարիայում, օրինակ, այդպիսի կառույց է Դաշնային վիճակագրական գրասենյակը: Սակայն, բացի վիճակագրական գրասենյակներից, պետական հաստատությունները հավաքում են տվյալներ (եթե դրանք ընդհանրապես որևէ տվյալ հավաքում են) ավելի նեղ, ավելի գործնական և ավելի «շահագրգռված» տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ գիտական տվյալներն ենթակա են որակի ապահովման և վերահսկողության ավելի խստացված մեխանիզմների, ինչպես նաև ավելի մանրակրկիտ կերպով են վերլուծվում:

Նասարակական գիտությունների դեմ քննադատության կողմերից մեկն էլ հաճախ այն է, որ նրանց արդյունքները այդքան էլ անակնկալ չեն, և որ նրանց հանգամ եզրակացություններին կարելի է գալ պարզապես առողջ դատողության միջոցով:

«Լավ» սոցիալական հետազոտության չափանիշն անակնկալ լինելը չէ, այլ այն, թե որքանով են դրա արդյունքները հիմնավոր և տեղին: Գիտական խստապահանջությամբ հավաքված և վերլուծված տվյալների վրա հիմնված փաստերը շատ առումներով ավելի գերակա են առողջ բանականության նկատմամբ՝ ավելի մանրամասն են, ճշգրիտ ու հաստատ, և դրանք ավելի դժվար է թաքցնել:

Կարևորը, դրանք ավելի թափանցիկ են՝ ավելի բաց քննադատության և ռացիոնալ բանավեճի համար, հատկապես, երբ հարցը վերաբերում է թեմաների, որոնց շուրջ քննարկումները հուզականացված կամ գաղափարականացված են:

Նասարակագետներին քննադատում են քիչ համագործակցելու համար այն մարդկանց հետ, ովքեր կարող են օգուտ քաղել իրենց գիտելիքից, օրինակ՝ քաղաքական այրերի հետ: Դուք նո՞ւյն կարծիքին եք:

Կարծում եմ, որ այդ: Ձեռք բերած գիտելիքը հազվադեպ է դուրս գալիս բնագավառի սահմաններից կամ փոխանցվում դեպի լայն հասարակություն: Թեև Եվրոպայում հետազոտություններն ավելի հաճախ են իրականացվում կոնսորցիումների և գիտնականների խմբերի կողմից, իսկ գիտելիքի փոխանցումն ավելի լայն հասարակությանը և քաղաքականություն մշակողներին այսօր գնալով ավելի եռանդուն պաշտպանություն է գտնում, քան անցյալում, հետազոտական աշխատանքը թերևս տակավին մնում է խիստ գիտական ու նեղ բնագավառային:

Ինչո՞ւ հասարակագետներն ավելի շատ չեն զբաղվում իրենց աշխատանքը հասարակության ավելի լայն շերտերին հայտնի դարձնելու գործով:

Որոշ չափով այն պատճառով, որ գիտական գործունեությունը կապված է ոչ թե գիտելիք փոխանցելու կամ քաղաքականության համար պիտանի լինելու, այլ խիստ մասնագիտացված գիտական ամսագրերում տպագրվելու հետ: Գործունեության ձևերը, որոնց նպատակը մասնագիտական գիտելիքը լայն լսարանին հասանելի դարձնելն է, ասենք՝ դասավանդելը, միությունների մեջ ներգրավվածությունը, կապը լրատվամիջոցների հետ, խաղում են ավելի ստորադաս դեր: Բացի այդ, շատ գիտնականների համար վերջին տարիներին խիստ ավելացել է ինստիտուցիոնալ աշխատաբեռը՝ շնորհիվ ուսանողների թվի աճի և համալսարանների հարաճուն բյուրոկրատացման: Այդ պատճառով հետազոտողները շատ անգամ չունեն ո՛չ ժամանակ, ո՛չ էլ շահադրոյում գիտելիքի փոխանցմամբ զբաղվելու համար:

Աճե՞լ է արդյոք կենտրոնացումը աշխատությունների քանակի վրա: Իմ բնագավառում՝ այդ: Եվ այդ միտումը շարունակվում է:

Լևո Սգիերը քաղաքագետ է և Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի քաղաքագիտության ամբիոնում զբաղեցնում է դոցենտի պաշտոն: Նա գործում դեր է խաղում ԿԱՇՅ ծրագրում և հանդիսանում է գիտական խորհրդատու և մեթոդաբանական աշխատանքային հանդիպումների հրահանգիչ: Նա քաղաքագիտություն ուսումնասիրել է Ժնևի համալսարանում:

Շնորհալի գիտնականների նոր սերունդ

Կովկասի Ակադեմիական Շվեյցարական Ցանցը (ԿԱՇՑ) բացառիկ ծրագիր է, որն ուղղված է Նարավային Կովկասում (հիմնականում Վրաստանում և Նայաստանում) հասարակական և հումանիտար գիտությունների զարգացմանը: Ծրագիրը տարբեր գործողությունների միջոցով խթանում է շնորհալի գիտնականների նոր սերունդի առաջացումը: «Կարևոր դեր են խաղում վրացական համալսարանները համաշխարհային առաջավոր փորձի և գիտական նվաճումների կենտրոնների գործընկերների հետ կապող միջազգային ծրագրերը», ասում է Գիա Նոդիան, որը քաղաքագիտության պրոֆեսոր է և Թբիլիսիի Իլյա Ճավճավաձեի անվան պետական համալսարանի Կովկասագիտության միջազգային դպրոցի տնօրենը: «Այն, ինչի կարիք Վրաստանը որպես երկիր ունի, դա առողջ բանականության մշակույթն է: Ոչինչ այնքան լավ չի զարգացնի այս մշակույթը, որքան դատողությունները փաստերի և ոչ թե «արժեքների» կամ քաղաքական ծրագրերի վրա հիմնելու սովորության արմատավորումը»:

Ահա թե ինչի է ձգտում հասնել ԿԱՇՑ ծրագիրը: Նրա հիմ նական ուղադրությունը ուղղված է այն անհատների առաջխաղացմանը, որոնք շնորհիվ իրենց ԿԱՇՑ-ի փորձի, ավելի լավ են կարողանում ինտեգրվել միջազգային գիտական համագործակցային ցանցերում:

Առ այսօր ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 21 նախագիծ: 2011 թվականին ծրագիրն օգնել է սնու 200 գիտնականների: ԿԱՇՑ-ը աջակցում է հետազոտական ծրագրերի, վերապատրաստման դասընթացների, աշխատանքային հանդիպումների, գիտաթղթակների և համաժողովների իրականացմանը Վրաստանում, Նայաստանում և Շվեյցարիայում, և այս ձևով հնարավորություն է տալիս ներգրավված բոլոր գիտնականներին ընդլայնել իրենց միջազգային ծանոթություններն ու կապերը:

ascn.ch

grstiftung.ch

Նամակարգում

Ծրագիրը, որի նախաձեռնողն ու հովանավորը «Գերերտ Ռուֆ Շտիֆտունգ» հիմնադրամն է, համակարգվում է Ֆրիբուրգի համալսարանի (Ժնև, Շվեյցարիա) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի միջառարկայական ինստիտուտի (ԿԱԵՄԻ) կողմից:

Կապի համար

Դենիս Դաֆֆլոն, ծրագրի համակարգող, Ֆրիբուրգի համալսարանի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի միջառարկայական ինստիտուտ (ԿԱԵՄԻ), denis.dafflon@unifr.ch

Տեղեկություններ

Gebert RUF Stiftung, Bäumleingasse 22/4 – 4051 Basel, հեռ. +41 (0)61 270 88 22, ֆաքս +41 (0)61 270 88 23, info@grstiftung.ch, grstiftung.ch

Գաղտնիարը և խմբագրական՝ advocacy ag, ASCN, Gebert RUF Stiftung,

Գրաֆիկա՝ aplus, Լուսանկարներ՝ Թրիստոֆ Լեգեր